ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**«ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ»**
Փակ բաժնետիրական ընկերություն

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА
**"НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ЭСТЕТИКИ
ИМЕНИ ГЕНРИКА ИГИТЯНА"**
Акционерное общество закрытого типа

REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
"NATIONAL CENTER FOR AESTHETICS AFTER HENRIK IGITYAN"
Closed joint-stock company

No Ա-24/187
«23» 10 2024թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ

Համաձայն Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար հյուրանոցային ծառայությունների մատուցման համար 26.09.2024թ-ին հայտարարվել է ԳԱԿ-ԳՀԾՁԲ-24/4 ծածկագրով մրցույթ: «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն վերոգրյալ մրցույթին ճանաչվել է հաղթող մասնակից: «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն 23.10.2024-թին ծանուցվել է որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի մասին:

Համաձայն «Գնումների մասին » ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև վերոգրյալ մրցույթի հրավերի 10.1 կետի (Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումները):

Տվյալ դեպքում որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու վերջնաժամկետ է հանդիսացել 30.10.204թ-ը, սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն գրությամբ հրաժարվել է պայմանագրի կնքումից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ պարբերության՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հաշվի առնելով, որ առկա են «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ին ՀՀ օրենքի 6-րդհոդվածի 1-ին մասին 6-րդ կետի բ պարբերությամբ նախատեսված՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

«ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ին ներառել 2 տարով գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սույն որոշումը կայացնելու օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն՝

_____ Է. Բաղալյան

Երևան 0001,Աբովյան 13
Yerevan 0001, Abovyan 13
Ереван 0001, Абовян 13

Հեռ.՝ +(374)6083-33-83
Tel.: + (374)6083-33-83
Тел.: + (374)6083-33-83

E-mail: info@nca.am